

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*2017 թվականի ընթացքում առողջապահության բնագավառում
միջազգային համագործակցության ընթացքի մասին*

Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունն ընթանում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարությունների միջև 2000թ. սեպտեմբերի 25-ին կնքված առողջապահության և բժշկագիտության բնագավառներում համագործակցության մասին Համաձայնագրի, ինչպես նաև 2010թ. սեպտեմբերի 13-ին ստորագրված Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներում: 2002թ. հուլիսի 2-ից գործում է ՀՀ առողջապահության նախարարության և ՌԴ առողջապահության նախարարության միջև Հիգիենիկ եզրակացությունների փոխադարձաբար ճանաչման մասին համաձայնագիրը:

Համագործակցություն է ընթանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Ռուսաստանի Դաշնության Մարդու բարեկեցության և սպառողների իրավունքների պաշտպանության վերահսկողության դաշնային ծառայության միջև 2008թ. մարտի 18-ին Երևանում ստորագրված գրիպի պանդեմիային նախապատրաստության և թռչնագրիպի մոնիտորինգի բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրի ու համաձայնագրին կից Վարչական պայմանագրի շրջանակներում:

ՀՀ առողջապահության նախարարության և ՌԴ սպառողների շահերի պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության (Ռոսպոտրեբնադոր) միջև կնքված «Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ» հուշագրի շրջանակներում 2012 թվականի հոկտեմբերին ստորագրվել են «Մոռացված տրոպիկական հիվանդությունների դեմ պայքարի մասին» և «Հայաստանի Հանրապետության առողջապահական կազմակերպություններին պոլիոմիելիտի ախտորոշման ուղղությամբ անհատույց լաբորատոր սարքավորումներ տրամադրելու մասին» վարչական պայմանագրերը, որի շրջանակներում իրականացվել է լաբորատոր սարքավորումների տրամադրում, մասնագետների վերապատրաստում:

«Ռոսպոտրեբնադորը» Հայաստանին աջակցել է նաև հեպատիտ A-ի դեմ պատվաստանյութերի ձեռք բերման գործում:

Հաշվետու ժամանակահատվածում ՌԴ «Ռոսպոտրեբնադոր» դաշնային ծառայության հետ ստորագրվել է «Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին» հուշագիր՝ 2017-2019թթ. համար:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գործում Հայաստանին օժանդակություն ցուցաբերելու ռուսական ծրագրի շրջանակներում հայկական կողմին տրամադրվել են լաբորատոր և ախտորոշիչ սարքավորումներ, ինչպես նաև պարբերաբար կազմակերպվել են հայ մասնագետների վերապատրաստման դասընթացներ Ռուսաստանի համապատասխան բժշկական հաստատություններում: Նույն ծրագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության կառավարությունը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել է երկու շարժական բժշկական-ախտորոշիչ կենտրոն:

2017 թ. սեպտեմբերի 26-ին Երևանում կայացավ հայ-ռուսական առողջապահական երրորդ համաժողովը: Համաժողովին մասնակցում էր ՌԴ առողջապահության նախարար Վ.Սկվորցովայի գլխավորած պատվիրակությունը:

Ռուսաստանի Դաշնության հետ ակտիվ համագործակցություն է ծավալվում միջկառավարական հանձնաժողովների (ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով և այլն), ինչպես նաև Անկախ Պետությունների Համագործակցության ու Եվրասիական Տնտեսական Միության կառույցների շրջանակում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) և ՀՀ կառավարության միջև 2010թ. օգոստոսի 6-ին ստորագրված առողջապահության և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ օժանդակության համաձայնագրի, այնուհետև նաև՝ 2013 թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ կառավարության և ԱՄՆ ՄԶԳ միջև ստորագրված համագործակցության նոր համաձայնագրի շրջանակներում իրականացվել է համագործակցություն՝ առողջության առաջնային օղակում բարեփոխումների, տուբերկուլոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության պահպանման, շտապ և անհետաձգելի բուժօգնության ծառայությունների և այլ բնագավառներում: 2015 թ. օգոստոսի 7-ին վերը նշված համաձայնագրի

շրջանակներում ստորագրվեց նոր աջակցման Համաձայնագիր՝ Հայաստանում տուբերկուլյոզի, մոր և մանկան և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության արդյունքների/ցուցանիշների բարելավման համար: Համաձայն Համաձայնագրի, ԱՄՆ ՄԶԳ պարտավորվում է դրամաշնորհ տրամադրել ՀՀ կառավարությանը՝ վերոհիշյալ ոլորտներում գործունեություն իրականացնելու համար, որի ընդհանուր արժեքը կազմում է 2 500 000 ԱՄՆ դոլար:

Շարունակվում է համագործակցությունը ԱՄՆ կառավարության պաշտպանության դեպարտամենտի «Միասնական ջանքեր վտանգների նվազեցման ուղղությամբ» կենսաբանական վտանգի նվազեցման ծրագրի շրջանակներում: Հաշվետու ժամանակահատվածում, ինչպես նախորդ տարիներին, տեղի են ունեցել ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի Վտանգի նվազեցման գործակալության և ՀՀ առողջապահության նախարարության փորձագետների աշխատանքային մի շարք հանդիպումներ, ինչպես նաև դասընթացներ:

Աշխատանքներ են իրականացվում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի միջև ստորագրված «Կենսաբանական զենքի ստեղծման համար պիտանի տեխնոլոգիաների, պաթոգենների և փորձագիտության տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում, որը ներառում է նաև առողջապահության ոլորտին վերաբերող դրույթներ:

ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի Վտանգների նվազեցման գործակալության Կենսաբանական ոլորտում նվազեցման համագործակցային ծրագրի (ԿՈՆՀԾ) շրջանակներում շահագործման են հանձնվել ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի շենքը, Տավուշի և Շիրակի մարզային լաբորատորիաները:

Բանակցություններ են տարվում Վաշինգտոնի «The George Washington University Hospital», Պիտսբուրգի՝ «University of Pittsburgh Medical Center» և Ֆիլադելֆիայի Children's Hospital of Philadelphia հեղինակավոր հիվանդանոցների հետ՝ հիվանդանոցների կառավարման ու բուժական ծառայությունների բարելավման ուղղությամբ համագործակցության շուրջ:

Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև 2005թ. մայիսի 3-ին ստորագրվել է առողջապահության և բժշկագիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիր, որով իրավական շրջանակ է ստեղծվել կողմերի համագործակցության համար:

Մասնավորապես, երկրների միջև իրականացվում է գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների, սիմպոզիումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում: Շարունակվում է իրականացվել վարակիչ հիվանդությունների մասին ամենամսյա փոխտեղեկատվությունը:

Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի համատեղ նիստի արդյունքում ստորագրված արձանագրության շրջանակներում կողմերը համագործակցում են դեղերի գրանցման ոլորտում:

2017 թ. մայիսին ժնկում կայացած Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության 70-րդ համաշխարհային վեհաժողովի ժամանակ ՀՀ առողջապահության նախարարը հանդիպում ունեցավ նաև Բելառուսի առողջապահության նորանշանակ նախարարի հետ: Հանդիպման ընթացքում ընդգծվեց երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև համագործակցության խորացման անհրաժեշտությունը: Միաժամանակ ՀՀ առողջապահության նախարարը Բելառուսի առողջապահության նախարարի կողմից գրավոր հրավեր է ստացել այցելելու Բելառուսի Հնարապետություն: Այցի ժամկետները դեռ հստակեցված չեն:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ գործում է 2012 թվականի օգոստոսի 16-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության առողջապահության նախարարության միջև առողջապահության և բժշկագիտության բնագավառներում համագործակցության մասին» համատեղ հայտարարությունը:

Թուրքմենստանի հետ առողջապահության բնագավառում համագործակցությունն ընթանում է 2017 թ. մարտի 14-ին կայացած հայ-թուրքմենական տնտեսական

համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ութերորդ նիստի ընթացքում ստորագրած արձանագրության շրջանակներում: ՀՀ առողջապահության նախարարությունը շարունակում է համագործակցությունը Թուրքմենստանի առողջապահության նախարարության հետ կանխարգելիչ բժշկության և շրջակա միջավայրի պահպանության, դեղաբանության և առողջ կենսակերպի պահպանման բնագավառներում:

Կողմերի միջև պարբերաբար իրականացվում է մասնագետների փորձի և տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև փոխադարձ մասնակցություն կոնֆերանսներին, գիտաժողովներին և սեմինարներին:

Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի համապատասխան կառույցների միջև շարունակվում է վարակիչ հիվանդությունների, սննդային, քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ ամսական փոխտեղեկատվության գործընթացը:

Համատեղ իրականացվում են աշխատանքներ նաև արտակարգ իրավիճակների բժշկասանիտարական հետևանքների կանխման և վերացման ուղղությամբ:

Բավականին ակտիվ է ընթանում **Իրանի Իսլամական Հանրապետության** հետ համագործակցությունը՝ երկու երկրներում անցկացվող բժշկագիտական և առողջապահական միջոցառումների, հիգիենիկ-համաճարակային իրադրության, ինչպես նաև դեղերի և բժշկական սարքավորումների արտադրության վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելու առումով: Իրականացվել են պատվիրակությունների փոխայցելություններ, հայ մասնագետները մասնակցել են Իրանում կազմակերպված մի շարք միջազգային համաժողովների:

Համագործակցություն է ընթանում 2016թ. դեկտեմբերին ՀՀ Նախագահի հրամանագրով ուժի մեջ մտած «Իրանի Իսլամական Հանրապետության առողջապահության և բժշկական կրթության նախարարության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

Կողմերն ակտիվ փոխգործակցում են հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի ամենամյա նիստերի շրջանակներում ստորագրված Փոխըմբռնման Հուշագրերով նախատեսված կետերի իրականացման շուրջ: Մասնավորապես, կողմերը համագործակցում են բուժական, դեղագործական, հիգիենիկ-հակահամաճարակային ոլորտներում:

Իսրայելի Պետության հետ առողջապահության բնագավառում համագործակցության պայմանագիրը ստորագրվել է Երուսաղեմում, 1998թ. հոկտեմբերի 29-ին:

Իսրայելական կողմը պարբերաբար տեղեկացնում է իր երկրում կազմակերպվող մի շարք առողջապահական և բժշկագիտական միջոցառումների մասին, որոնց կարող են մասնակցել նաև հայ մասնագետները:

Հայկական կողմը պարբերաբար ներկայացնում է տեղեկություն վարակիչ հիվանդությունների, սննդային, քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարն ընդունել է Իսրայելի առողջապահության նախարարի և առողջապահության նախարարության գլխավոր տնօրենի հատուկ հարցերով գլխավոր խորհրդական, պրոֆեսոր Շաուլ Յացիվիին և Իսրայելի առողջապահության նախարարության բժշկական մասնագիտությունների արտոնագրման բաժնի ներկայացուցչին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են մասնագիտական կրթության և հավաստագրման հարցեր:

2017թ. հունիսին Հռոմում կայացավ **հայ-իտալական** միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստը, որի շրջանակներում կողմերը ստորագրել են Փոխըմբռնման հուշագիր՝ արյունաբանության ոլորտում համագործակցության մասին:

Հնդկաստանի հետ համագործակցության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները շարունակաբար մասնակցել են այդ երկրում կայացած միջոցառումներին:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև հեռաբժշկության ցանց ստեղծելու մասին» փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, հնդկական կողմի նախաձեռնությամբ, Հայաստանում կատարվել է հեռուստաբժշկության ծրագրի ներդրման մեծածավալ ուսումնասիրություն: Այդ ծրագրի շրջանակներում հնդկական կողմը հանրապետության մարզերում իրականացրել է մարզային բուժփիմնարկների հագեցում համակարգչային տեխնիկայով, որը թույլ կտա իրականացնել հեռաբժշկական խորհրդակցություններ:

Հնդկական կողմը առաջարկներ է արել նաև դեղարտադրության ոլորտում համագործակցություն իրականացնելու ուղղությամբ: Հայրենական որոշ դեղարտադրող ընկերությունների հետ արդեն իսկ ծավալվել է փոխգործակցություն՝ վերը նշված ոլորտում:

Երկու երկրների միջև մշակվել են համագործակցության երկու Փոխըմբռնման հուշագրերի նախագծեր՝ «Հնդկաստանի Հանրապետության առողջապահության և ընտանեկան բարեկեցության նախարարության դեղերի ստանդարտների վերահսկման կենտրոնական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի միջև դեղերի կարգավորման բնագավառում համագործակցության մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև բժշկության ավանդական համակարգի և հոմեոպաթիայի բնագավառում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագրերը, որոնք շահագրգիռ կառույցների հետ փոխհամաձայնեցնելուց հետո և դրանք ստորագրելու դրական կարծիքով դիվանագիտական խողովակով ներկայացվել են հնդկական կողմին:

Միաժամանակ ՀՀ ԱԳՆ միջոցով ստացված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև առողջապահության և բժշկագիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագրի հնդկական նախագիծը ՀՀ առողջապահության նախարարության կողմից լրամշակվել, հայերեն թարգմանվել և ներկայացվել է ՀՀ արտգործնախարարություն:

2014 թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի **Հորդանանի Հաշիմյան Թագավորություն** կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահության

նախարարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության առողջապահության նախարարության միջև առողջապահության ու բժշկագիտության ոլորտներում համագործակցության մասին» Համաձայնագիր, որը վավերացվեց ՀՀ Նախագահի կողմից 2015 թվականին:

Համագործակցություն ծավալելու նպատակով կողմերը փոխանակվել են աշխատանքային խմբերի կազմերով: Հորդանանի առողջապահության նախարարությունից հրավեր է ստացվել՝ այցելելու Հորդանան, երկրի առողջապահական համակարգի հնարավորություններին տեղում ծանոթանալու և համագործակցության ուղղությունները քննարկելու նպատակով: ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացվել է աշխատանքային խմբի կազմը, որը կայցելի Հորդանան՝ երկրի առողջապահական համակարգին ծանոթանալու, համագործակցության ուղղությունների, ինչպես նաև երկու երկրների առողջապահության նախարարների հանդիպում կազմակերպելու շուրջ բանակցելու նպատակով: ՀՀ առողջապահության նախարարի անունից 2018թ. ընթացքում Հայաստան այցելելու հրավեր է ուղղվել Հորդանանի առողջապահության նախարարին:

Հունաստանի հետ առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 1996 թվականի հունիսի 18-ին, Աթենքում: Ստորագրող կողմերն էին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը և Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը: Համագործակցության շրջանակներն են առողջապահական, վիճակագրական տվյալների, համաճարակաբանական իրավիճակի վերաբերյալ փոխտեղեկատվությունը, միմյանց տարածքում գտնվող քաղաքացիներին սուր և անհետաձգելի դեպքերում փոխօգնության տրամադրումը, փորձագետների, մասնագետների, գիտնականների փոխադարձ այցելությունները և այլն:

Հաշվի առնելով ներկայիս առողջապահության բնագավառի նորամուծությունները, ինչպես նաև հանրային առողջության ոլորտի նոր մարտահրավերները, գործող Համաձայնագրի շրջանակներում մշակվել և 2016 թվականի մարտին Հայաստանի Հանրապետության Նախագահի Հունաստան կատարած այցի շրջանակներում

ստորագրվել է առողջապահության բնագավառում համագործակցության մասին 2016-2018 թվականների համար Գործողությունների պլան:

Կողմերը համագործակցության խորացման քայլեր են անում նաև 2016 թ. մարտի 4-ին Աթենքում կայացած Հունաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև տնտեսական, արդյունաբերական և տեխնոլոգիական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստի արձանագրության շրջանակներում:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ համագործակցությանը իրավական հիմք է տրվել 1992թ. հուլիսի 4-ին Պեկին քաղաքում ստորագրված Մշակույթի, կրթության, առողջապահության, սպորտի և տուրիզմի բնագավառներում համագործակցության միջկառավարական համաձայնագրի և 1993թ. օգոստոսի 26-ին Երևան քաղաքում ստորագրված Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության մասին միջգերատեսչական համաձայնագրի շրջանակներում:

Չինական կողմը մեծապես աջակցում է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ Չինաստանում հայ մասնագետների վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ: Հաշվի առնելով շտապ օգնության ծառայության բարելավման ուղղությամբ կողմերի համագործակցության դրական փորձը, չինական կողմին խնդրանք է հղվել Հայաստանին աջակցելու ևս 200 շտապ օգնության մեքենաներով և ռեանիմոբիլներով: Չինաստանի կառավարությունը դրական արձագանք է տվել ևս 200 շտապ օգնության մեքենաներով և ռեանիմոբիլներով Հայաստանին աջակցելու ՀՀ առողջապահության նախարարության դիմումին: 2017թ. մայիսի 13-ին ստորագրվել է միջկառավարական համաձայնագիր, ըստ որի 100 միլիոն յուանի անհատույց օգնություն է տրամադրվում Հայաստանին՝ մեքենաներ մատակարարելու նպատակով: Այս մեքենաները կօգնեն ամբողջովին լուծելու երկրի՝ շտապ օգնության մեքենաներով ապահովման հարցն առաջիկա տարիների համար: Ներկայում, մեքենաների տեխնիկական բնութագրերը վերջնական համաձայնեցնելուց հետո, չինական կողմը մրցույթ է հայտարարել՝ դրանք ձեռք բերելու նպատակով: Բացի այդ, ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով Չինաստանի Սինձյան-Ույղուրական նահանգի կողմից Հայաստանին հեռաբժշկության սարքեր նվիրաբերելու առաջարկ է ստացվել, ինչը թույլ կտա ախտորոշման և բուժման

նպատակներով բժշկական խորհրդատվություններ անցկացնել հայ և չինացի մասնագետների միջև:

Ճապոնիայի հետ համագործակցությունն ընթացել է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ծրագրի շրջանակներում: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով JICA-ի կողմից առողջապահության բնագավառում դրամաշնորհային ծրագրեր ներկայացնելու առաջարկ է ստացվել: ՀՀ առողջապահության նախարարությունը դիվանագիտական խողովակներով ճապոնական կողմին է ներկայացրել մի քանի ծրագրային փաթեթ:

2018 թ. ընթացքում Հայաստան այցելելու հրավեր է հղվել Ճապոնիայի առողջապահության նախարարին:

«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և **Չեխիայի Հանրապետության** առողջապահության նախարարության միջև առողջապահության ու բժշկագիտության ոլորտներում համագործակցության մասին» համաձայնագիր է ստորագրվել 2014 թ. հունվարին: Կողմերը ստորագրել են նաև միմյանց արյունաբանական կենտրոնների միջև համագործակցության հուշագրեր, որոնց շրջանակներում եղել են փոխայցելություններ և կատարվել է համապատասխան մասնագիտական աշխատանք:

ՀՀ առողջապահության նախարարությունը, Եվրոպական Միության TAIEX գործիքի շրջանակներում համագործակցելով Չեխիայի առողջապահության նախարարության հետ, բժշկական ապահովագրության ներդրման թեմայով հայ մասնագետների համար 2017 թ. մարտի 1-2-ը Երևանում կազմակերպեց վերապատրաստման դասընթաց, որին մասնակցեցին առողջապահության կազմակերպիչներ՝ Երևանից, Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաև Արցախից:

2017թ. մայիսին Հայաստան այցելեց Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալներից կազմված պատվիրակություն: Այցի շրջանակներում չեխ գործընկերները ծանոթացան Հայաստանի առողջապահական համակարգին, այցելեցին մի քանի բժշկական կենտրոններ, հայ գործընկերների հետ քննարկեցին հետագա համագործակցության ուղղությունները:

Արդյունքում Չեխիայի առողջապահության նախարարի կողմից ստացվեց հրավեր՝ ս.թ. հուլիսի 17-19-ը այցելելու Պրահա, որտեղ այդ օրերին կայացավ «Չինաստանի ներդրումային համաժողով-2017» միջոցառումը: Ներդրումային հնարավորությունների տեսանկյունից կարևոր այս միջոցառմանը մասնակցելուց բացի, ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ծանոթացան Չեխիայի առողջապահական համակարգին, ինչպես նաև քննարկեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները:

Չեխիայի առողջապահության նախարարության և Հրադեց Կրալովյան երկրամասի հետ համագործակցության շնորհիվ շուտով ՀՀ պաշտպանության նախարարությանը կնվիրաբերվի մագնիսառեզոնանսային հետազոտության սարք: Միաժամանակ, ՊՆ երեք բուժաշխատողի համար ս.թ. դեկտեմբերին կազմակերպվել է երկշաբաթյա վերապատրաստման դասընթաց՝ Չեխիայում:

Վրաստանի հետ գործում է 1993 թվականի մայիսի 19-ին ստորագրված միջկառավարական համաձայնագիրը: Ներկայում կան առողջապահական գլոբալ մարտահրավերներ, մասնավորապես վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ասպարեզում, որոնց ուղղությամբ հարևան երկրների ջանքերի միատեղում է անհրաժեշտ:

Հաշվի առնելով վերոհիշյալը, 2017 թվականի փետրվարի 23-ին ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրն, որն ուժի մեջ է մտել 2017թ. հունիսի 1-ից:

2017թ. ընթացքում շարունակվել է Վրաստանի հետ համագործակցությունը տեղեկատվության փոխանակման, տարածաշրջանային համագործակցության մի շարք միջազգային ծրագրերի շրջանակներում: Հայաստանի և Վրաստանի միջև իրականացվում է միջպետական համագործակցություն «Սահմանների համալիր կառավարում» ծրագրի շրջանակներում:

Համաձայն Վրաստանի և Հայաստանի միջև տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 9-րդ նիստի արձանագրության 14-րդ կետի, կողմերի առողջապահության նախարարությունները քննարկել են համատեղ գիտական միջոցառումների կազմակերպման, իմունականխարգելման, մանկական տարիքի հիվանդությունների ինտեգրացված վարման և անվտանգ մայրության ոլորտներում տեղեկատվության փոխանակման, ԱՀԿ հաստատագրված միջազգային բժշկասանիտարական կանոնների ներդրման ոլորտներում համագործակցության զարգացման հնարավորությունները, ինչպես նաև հանրային առողջության ոլորտում արտակարգ իրավիճակ ստեղծող ցանկացած պատահարի վերաբերյալ փոխտեղեկատվության ապահովման հարցերը: Համագործակցության շրջանակներում Հայաստանի բուժհաստատություններում ծննդօգնության, մանկական վերականգնողական, մանկական սրտային վիրաբուժության, վերարտադրողական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ և այլ մասնագիտացված բժշկական ծառայություններ են ցուցաբերվել Վրաստանի (այդ թվում նաև Ջավախքի) բնակչությանը: Իրականացվել է վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակի վերաբերյալ պարբերական փոխտեղեկատվություն:

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վրաստանի կառավարությունը Հայաստանին նվիրաբերեց 3000 տուփ «Սովալդի» դեղամիջոց, որը տրամադրվել է շուրջ 1000 հեպատիտ Ց-ով տառապող հիվանդի և փրկել նրանց կյանքը:

2017 թ. հունիսի 13-ին **Տաջիկստանի Հանրապետության** Նախագահ Է.Ռահմոնի Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև ստորագրվեց առողջապահության բնագավառում համագործակցության միջգերատեսչական համաձայնագիր:

Ֆրանսիայի հետ ավանդական բարեկամությունը հիմք է դրել մի շարք պետական ու հասարակական կառույցների հետ համագործակցության ծավալման համար: Հայաստանում, տուբերկուլոզի ոլորտում, հաջողությամբ գործում է ֆրանսիական «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպությունը, որն օժանդակում է ՀՀ առողջապահության նախարարության Տուբերկուլոզի Ազգային Գրասենյակին

տուբերկուլոզով հիվանդների բուժման հարցում Երևանում, Արմավիրի, Շիրակի, Լոռու, Կոտայքի և Արարատի մարզերում, ինչպես նաև դեղորայքակայուն տուբերկուլոզի բուժման ծրագիր է իրականացնում Արցախի Հանրապետությունում:

Ֆրանսիայի «Գուստավ Ռուսի» առաջատար ուռուցքաբանական կենտրոնում հայ ուռուցքաբանների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

Հայաստանում աշխատանք է իրականացնում «Ցավեր առանց սահմանների» կազմակերպությունը:

Համագործակցություն է ծավալվել ֆրանսիական «PCD» կազմակերպության հետ, որը կնպաստի Հայաստանում ուռուցքաբանության, մանկաբուժության և գինեկոլոգիայի ասպարեզներում ախտորոշման և բուժօգնության որակի բարելավմանը: Լոռու մարզում շարունակում է գործել Ֆրանսիայի հայ բժիշկների միության նախաձեռնությունը՝ շարժական ատամնաբուժական կլինիկան: Վայոց Ձորում մեկնարկած «Ակնոցներ Հայաստանի համար» ծրագիրը նույնպես Ֆրանսիայի հայ բժիշկների միության նախաձեռնությունն է:

Ֆրանսիայի կառավարությունը՝ Initiative 5% ծրագրով աջակցում է Գլոբալ հիմնադրամին, որը Հայաստանում իրականացնում է տեխնիկական աջակցություն տուբերկուլոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մալարիայի դեմ պայքարի ոլորտում:

Գորիսում գործում է հայ-ֆրանսիական սրտաբանական ժամանակակից կլինիկա:

2017 թ. հուլիսի 6-7-ը Երևանում կայացավ առողջապահության բնագավառում հայ-ֆրանսիական բիզնես համաժողովը: Քննարկվեց Ֆրանսիայի հետ երկկողմ համագործակցության, այդ թվում գործարար, լայն շրջանակ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարն ընդունել է Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Լաքրոտին:

Պատրաստվել է ստորագրման ՀՀ և **Ղազախստանի** առողջապահության նախարարությունների միջև համագործակցության մասին համաձայնագիր, ինչպես նաև **Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության** առողջապահության նախարարության հետ համագործակցության համաձայնագիր:

Ներպետական համաձայնեցման փուլում է **Մալթայի Ուխտի** հետ համաձայնագրի նախագիծը:

Աշխատանքներ են տարվել **Կուրբայի** հետ համագործակցության սերտացման ուղղությամբ, մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի՝ Կուրբա այցի հրավեր է ստացվել: Նախատեսվում է, որ այցը կկայանա 2018 թվականի ընթացքում:

Գործնական ու գործարար առաջարկներ կամ ներդրումային ծրագրեր են ներկայացվել 30-ից ավելի երկրներ ու միջազգային կառույցներ (**ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ, Արգենտինա, ԱՊՀ երկրներ, Բելառուս, Բուլղարիա, Գերմանիա, Եգիպտոս, Թուրքմենստան, Իսրայել, Իտալիա, Իրան, Իրաք, Լիբանան, Կուրբա, Հնդկաստան, Հորդանան, Հունաստան, Չեխիա, Չինաստան, Ռումինիա, Ռուսաստան, Սլովակիա, Վրաստան, Ուկրաինա, Ուրուգվայ, Սինգապուր, Կորեայի Հանրապետություն, Ֆինլանդիա, Էստոնիա, Խորվաթիա**), օգտագործելով ինչպես դիվանագիտական ուղիները, ՀՀ Նախագահի (**Բելգիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ, Վրաստան**) ու ՀՀ Վարչապետի (**Վրաստան, Ռուսաստան, Իրան, Թուրքմենստան, Ուզբեկստան**) այցերի համար նախապատրաստվող փաթեթները, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարի այցերը (**Վրաստան, Դանիա, Շվեյցարիա, Չեխիա, Ռուսաստանի Դաշնություն**) ու հանդիպումները (**Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Ճապոնիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Չինաստան, Հնդկաստան, Կորեայի Հանրապետություն, Լիբանան, Եգիպտոս, Արգենտինա, Ռուսաստան, Բելառուս, Համաշխարհային բանկ, Եվրասիական զարգացման բանկ, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ՄԱԿ բնակչության հիմնադրամ, UNAIDS, Բաց հասարակության հիմնադրամներ, Վորլդ Վիժն, տուբերկուլոզի, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ, Հայ Օգնության ֆոնդ**): Առաջարկները վերաբերվել են առողջապահության բնագավառի տարբեր ուղղություններով համագործակցության խորացմանը, այդ թվում նաև ՀՀ բուժհաստատությունները միջազգային հեղինակավոր կառավարիչների օգնությամբ զարգացնելուն, դրանք տեխնոլոգիապես հարստացնելուն, բուժաշխատողների մասնագիտական կարողությունները բարձրացնելուն:

Համագործակցություն ԵՄ, ԱՊՀ և ԵԱՏՄ շրջանակներում

Հայաստանը միշտ ակտիվորեն մասնակցել է ԱՊՀ առողջապահական հանձնաժողովների նիստերին, շահագրգիռ քննարկումներ ծավալել մեր երկրի համար հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով, ստորագրել ԱՊՀ սահմաններում ընդհանուր խնդիրների լուծմանն ու կարգավորմանը վերաբերող կարևոր մի շարք փաստաթղթեր: ՀՀ առողջապահության համակարգի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են ԱՊՀ հովանու ներքո կազմակերպվող միջոցառումներին:

ՀՀ առողջապահության նախարարությունը հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել է նաև Եվրասիական Տնտեսական Միության շրջանակներում ընդհանուր գործընթացներին առնչվող փաստաթղթերի, նախագծերի մշակման և համաձայնեցման գործընթացին:

2017 թվականի մարտին կազմակերպվել է ԵՄ-Հայաստան աշխատաժողով՝ ԵՄ «Հիվանդությունների կանխարգելման ու վերահսկման կենտրոնի» հետ համագործակցության ծավալման նպատակով:

Եվրամիության TAIXE գործիքի աջակցությամբ 22-23 մարտի 2017թ. Երևանում կազմակերպվել է «ԵՄ առողջապահության ապահովագրության լավագույն փորձի ուսումնասիրություն» խորագրով աշխատաժողովը, որին մասնակցել են ԵՄ 5 երկրների (Իտալիա, Չեխիա, Սլովենիա, Խորվաթիա, Հունաստան) ներկայացուցիչներ:

Նախարարությունն ակտիվորեն մասնակցել է ԵՄ, ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ շրջանակներում իրավական-նորմատիվ փաստաթղթերի նախագծերի մշակման և համաձայնեցման գործընթացին: 2017թ. նոյեմբերի 24-ին Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների հետ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրի ստորագրումից հետո մշակվել են ԵՄ երկրների հետ համագործակցության ուղղությունների վերաբերյալ առաջարկներ:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Բացի երկրների հետ երկկողմ համագործակցությունից, ՀՀ առողջապահության նախարարությունն ուղղորդում է նաև միջազգային, հասարակական կազմակերպությունների կողմից առողջապահության բնագավառում տարվող ծրագրային աշխատանքները:

Ստորև ներկայացվում է դրանցից առավել կարևոր ծրագրերի թվարկումը.

ՄԱԿ կառույցներ՝

2017 թվականի հունիսի 22-ից 23-ը Հաագայում (Նիդեռլանդների Թագավորություն) **Միացյալ Ազգերի Կազմակերպության պետական ծառայության** օրվա շրջանակում կայացան ՄԱԿ-ի պետական ծառայության ֆորումը և մրցանակաբաշխությունը:

Միացյալ Ազգերի Կազմակերպության տնտեսական և սոցիալական հարցերով դեպարտամենտի կողմից հայտարարված ՄԱԿ-ի պետական ծառայության ամենամյա մրցույթում «Առողջապահության ծառայությունների տրամադրման գործում նորարարություն և գերազանց որակ» կատեգորիայում Հայաստանի Հանրապետությունում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացում նախաձեռնության իրականացման համար ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ կանխարգելման հանրապետական կենտրոնը ճանաչվել է հաղթող:

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՀՀ առողջապահության նախարարության և ԱՀԿ միջև հաշվետու ժամանակահատվածում գործել է 2015 թվականի հոկտեմբերի 21-ին Մինսկում ստորագրված 2016-2017թթ. համար երկամյա համագործակցության համաձայնագիրը, որով սահմանվել են ընթացիկ և առաջիկա երկու տարիներին նախատեսվող համագործակցության ուղղությունները: Ստորագրված փաստաթղթով շարունակվել է համագործակցությունը իմունականխարգելման, տուբերկուլոզի ազգային ծրագրի, հոգեկան առողջության ոլորտի բարեփոխումների, հանրային առողջապահական

կարողությունների հզորացման, ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների ուսումնասիրման և վերահսկման համակարգի ստեղծման, մոր և մանկան առողջության պահպանման, միջազգային առողջապահական կանոնների կիրառման և այլ ուղղություններով:

Ներկայում ԱՀԿ հետ հստակեցվում են 2018-2019 թվականների երկամյա համագործակցության համաձայնագրի առաջնային ուղղությունները:

Մեծ է ԱՀԿ դերը առողջապահության բնագավառում քաղաքական կարևոր փաստաթղթերի մշակմանը տեխնիկական, փորձագիտական օժանդակություն ցուցաբերելու առումով:

2017 թ. մայիսին ժնևում կայացել է ԱՀԿ հերթական 70-րդ վեհաժողովը, որին մասնակցեցին ՀՀ առողջապահության նախարարը և նախարարի տեղակալը: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության եվրոպական տարածաշրջանային կոմիտեի հերթական՝ 67-րդ նիստը կայացավ 2017թ. սեպտեմբերին՝ Բուդապեշտում: Միջոցառմանը մասնակցեց ՀՀ առողջապահության նախարարի տեղակալը:

2017 թ. մարտի 20-ին Երևանում կայացավ Առողջապահության համաշխարհային կազմակերպության բարձրաստիճան խորհրդաժողով՝ ոչ վարակիչ հիվանդությունների կանխման հարցերի վերաբերյալ:

2017 թ. նոյեմբերի 16-17-ը Մոսկվայում կայացավ «Տուբերկուլոզի վերացումը կայուն զարգացման դարաշրջանում» խորագրով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության առաջին գլոբալ նախարարական համաժողովը, որին մասնակցեց ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակությունը՝ նախարարի գլխավորությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները մասնակցել են ԱՀԿ հովանու ներքո կազմակերպված բազմաթիվ միջոցառումների, հանդիպումների, խորհրդակցությունների, որոնք մեծապես նպաստել են առողջապահության բնագավառում միջազգային փորձն ուսումնասիրելու և այն Հայաստանում ներդնելու գործին:

ՄԱԿ մանկական հիմնադրամի (UNICEF) ծրագրեր

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը UNICEF-ի հետ, որն օժանդակում է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ռազմավարական փաստաթղթերի մշակման, երկրին անհրաժեշտ պատվաստանյութերի և իրականացվող ծրագրերի շրջանակներում դեղերի և առանձին սարքավորումների ձեռք բերման, ինչպես նաև երեխայի առողջության հավաստագրի ծրագրի ներդրման հարցերում:

ՀՀ կառավարության և ՄԱԿ մանկական հիմնադրամի միջև ստորագրված համագործակցության 5-ամյա ռազմավարական փաստաթղթի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության և UNICEF-ի միջև իրականացվում է վաղ տարիքի երեխաների և դեռահասների առողջության ծրագիր: Այն աջակցել է ՀՀ կառավարությանը բարձրացնելու մոր և մանկան առողջապահական ծառայությունների, մասնավորապես՝ նորածնային խնամքի, իմունիզացիայի, վաղ տարիքի երեխաների առողջության և խնամքի, դեռահասների առողջության ու սնուցման հասանելիությունը և որակը:

Հայաստանը, միջազգային համագործակցության շնորհիվ, անցած տարիների ընթացքում մեծ հաջողությունների է հասել մի քանի վտանգավոր ինֆեկցիաների դեմ պայքարում, ստացել է յողդեֆիցիտային հիվանդություններից ազատ գոտու սերտիֆիկատ:

Ընթացիկ ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունն առողջապահության բնագավառում գործող ՄԱԿ-ի UNFPA (Վերարտադրողական առողջություն և ընտանիքի պլանավորում), ինչպես նաև ՄԱԿ-ի UNAIDS (ՁԻԱՀ դեմ պայքար) ծրագրի շրջանակներում:

Ս.թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած ԱՀԿ նախարարական համաժողովի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարը հանդիպումներ է ունեցել ԱՀԿ գլխավոր տնօրենի, UNAIDS կազմակերպության գործադիր տնօրենի և ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի տնօրենի հետ: Վերջիններիս կողմից բարձր են գնահատվել Հայաստանի ջանքերն ու հաջողությունները տուբերկուլոզի, ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գործում: Իր հերթին, ՀՀ առողջապահության նախարարը վերը նշված անձանց 2018 թ. ընթացքում Հայաստան այցելելու հրավեր է ուղղել:

Համագործակցություն է ընթանում World Vision, Oxfam, Save the Children միջազգային կազմակերպությունների հետ: Առողջապահության նախարարության և վերոհիշյալ կազմակերպությունների միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր, որոնց շրջանակներում իրականացվում են մոր և մանկան առողջության, առողջության առաջնային պահպանմանն ուղղված ծրագրեր:

ՀՀ առողջապահության նախարարությունը ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի **Գլոբալ հիմնադրամի** աջակցությամբ ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի իրականացումը սկսել է 2007 թվականից:

2017 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ երկու՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» (մեկնարկել է 2015թ-ի հոկտեմբերի 1-ից, նախատեսված է 2015-2018թթ. համար) և «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» (մեկնարկել է 2016թ-ի հունվարի 1-ից, նախատեսված է 2016-2018թթ. համար) դրամաշնորհային ծրագրերը: Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման ծրագրեր, բժշկական կազմակերպությունները կանոնավոր մատակարարվել են հակառետրովիրուսային, հակատուբերկուլոզային դեղամիջոցներով, ՄԻԱՎ-ի ախտորոշման թեստ-հավաքածուներով, լաբորատոր ծախսանյութերով, վարակի վերահսկման պարագաներով և սարքավորումներով: Արդիականացվել և թվայնացվել են հակատուբերկուլոզային ծառայություններ մատուցող ՀՀ մարզային տասներկու բժշկական կազմակերպությունների ֆյուրոգրաֆիկ սարքավորումները: Իրականացվել են հիվանդների սոցիալական աջակցության և տնային խնամքի, ինչպես նաև հանրության իրազեկման միջոցառումներ:

Ծրագրերի իրականացումը նպաստել է հիվանդությունների դեմ պայքարի ոլորտներում նկատելի ձեռքբերումների՝ զգալիորեն նվազել է տուբերկուլոզով հիվանդացությունն ու այդ հիվանդությունից մահացությունը, համընդհանուր հասանելի են դարձել վերջին սերնդի դեղամիջոցները, ինչի շնորհիվ շուրջ 800 տուբերկուլոզով հիվանդի և 1000-ից ավելի ՄԻԱՎ վարակ ունեցող անձանց տրամադրվել է անվճար

բուժում՝ տալով նրանց լիարժեք կյանքով ապրելու, աշխատելու և իրենց ընտանիքների մասին հոգալու հնարավորություն:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ ՄԻԱՎ-ի և այլ արյունային վարակների կանխարգելման նպատակով իրականացվել է ներարկային թմրամիջոցներ օգտագործող անձանց մեթադոնային փոխարինող բուժում (ծրագրում ընդգրկված է շուրջ 503 շահառու), ինչպես նաև կանխարգելման ծրագրեր բնակչության այլ խոցելի խմբերի շրջանում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվել է **Համաշխարհային բանկի** կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային և համանուն TF 014138 դրամաշնորհային ծրագրերը:

Վարկային ծրագրի «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում առողջության առաջնային պահպանման հաստատություններում ոչ վարակիչ հիվանդությունների և մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավում» բաղադրիչի շրջանակներում նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացվել են սկրինինգային հետազոտություններ, որոնց նպատակն է ՀՀ բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների՝ հիպերտոնիայի և շաքարային դիաբետի (կանանց և տղամարդկանց 35-68 տարիքային խումբ), արգանդի պարանոցի քաղցկեղի (կանանց 30-60 տարիքային խումբ) զանգվածային սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, վերահսկմանը և մահացության նվազեցմանը: Իրականացվել է նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում մեզի և արյան երրորդ հետազոտություն, ինչպես նաև հանրային իրազեկման քարոզարշավ:

Վարկային ծրագրի «Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում իրականացվել են.

1. ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ հիմնանորոգման շինարարական աշխատանքների համակարգման գործընթացը: Առ 15.12.2017թ.-ի դրությամբ կատարված է աշխատանքի 69%-ը:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների, որպես կապալառու, համակարգման գործընթացը: Առ 15.12.2017թ.-ի դրությամբ կատարված աշխատանք՝ 54%:
3. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնի, ինչպես նաև վերջինիս մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով հագեցման նպատակով հայտարարավել է մրցույթ, ինչի արդյունքում կնքվել են պայմանագրեր: Ապրանքները մատակարարվել են: Բժշկական կենտրոնի հագեցման գործընթացը կմեկնարկի բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների ավարտից հետո, ինչը նախատեսվում է 2018 թվականի հունվար-փետրվար ամիսներին: Շինարարական աշխատանքներն իրականացվում են ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից:

Համագործակցություն Սփյուռքի կառույցների հետ

Ակտիվ համագործակցություն է ընթանում նաև սփյուռքի կառույցների հետ: Գործնական աշխատանքին զուգահեռ մշտապես համատեղ խորհրդակցություններ են անցկացվում համագործակցության հետագա ուղղություններն ու քայլերը ճշտելու նպատակով:

Այս առումով հատկապես կարևոր իրադարձություն են սփյուռքահայ առողջապահական բազմաթիվ կազմակերպություններ ընդգրկող **Հայկական բժշկական միջազգային կոմիտեի** (AMIC) կողմից չորս տարին մեկ անգամ կազմակերպվող համաժողովները, որոնց 1992 թվականից մինչ այժմ Հայաստանի ու Արցախի ներկայացուցիչները կանոնավոր մասնակցում են: Հայկական բժշկական միջազգային կոմիտեի հետ համագործակցությունն ընթանում է բավականին արդյունավետ:

Համաժողովների ընթացքում շոշափվում են Հայաստանի և Սփյուռքի համար առավել կարևորություն ներկայացնող համագործակցության խնդիրները:

2017 թ. մայիսի 31-ից հունիսի 2-ը Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսում կայացավ Հայ բժիշկների համաշխարհային 12-րդ համաժողովը, որին մասնակցեցին աշխարհի տարբեր անկյունների, այդ թվում նաև՝ Հայաստանի և Արցախի

առողջապահության կազմակերպիչներն ու բժիշկները: Քննարկվեցին Հայաստան-Սփյուռք-Արցախ համագործակցության հարցերը առաջիկա 4 տարվա համար:

Շարունակվում է համագործակցության սերտ գործընթացը **Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի** (FAR) հետ, որի կողմից 2017 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

«Կոլխիցին» դեղահաբի նվիրատվություն պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին,

ՀՀ Արագածոտնի մարզում երեխաների առողջության բարելավման ծրագիր,

Շարունակական բժշկական կրթության ծրագիր Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում աշխատող բժիշկների համար,

Բժշկական սարքերի և պարագաների նվիրատվություն Տավուշի մարզի և Արցախի բժշկական հաստատություններին,

«Շարունակական բժշկական կրթություն» ծրագիր Հայաստանում և Արցախում,

Իրականացվել է «Ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդ երեխայի վիճակի գնահատումը» թեմայով դասընթաց Արցախում,

Հանդիպում «Շարունակական բժշկական կրթություն» ծրագրի վերապատրաստման ղեկավարների հետ,

«Աղքատության կրճատումը Տավուշի մարզում» ծրագրի շրջանակներում իրականացվել է նախադպրոցական տարիքի երեխաների թերսնուցման հաղթահարման ծրագիր ՀՀ Տավուշի մարզում,

Ուսուցանողի ուսուցանում Բերդ քաղաքում. 2017 թ. մայիս և հունիս ամիսներին Բերդում անցկացվեցին դասընթացներ «Ցանավորումով ընթացող մանկական ինֆեկցիոն հիվանդություններ» և «Երեխաների ճանաչողական զարգացումը» թեմաներով նախատեսված «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» ծրագրում ընդգրկված համայնքների բժիշկների համար,

«Մանկական առողջության արդի խնդիրները» դասընթաց Իջևանում, Տավուշի մարզ:

Հյուսիսային Ամերիկայի Հայ Օգնության Միության (ՀՕՄ) կողմից շարունակվում է աջակցությունը ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի Մոր և մանկան առողջության

կենտրոնին, որտեղ բարեգործական հիմունքներով բարձրորակ բժշկական օգնություն է ցուցաբերվում կանանց և մանուկներին:

«Հայկական ակնաբուժության նախագիծ»-ը (ՀԱՆ) ամերիկահայ ակնաբույժ Ռոջեր Օհանեսյանի կողմից 1992թ-ին ԱՄՆ-ում հիմնադրված բարեգործական կազմակերպություն է, որի առաքելությունն է կանխարգելել ձեռքբերովի կուրությունը Հայաստանում և ակնաբուժական ծառայությունները հասանելի դարձնել բոլորի համար: «Հայկական ակնաբուժության նախագիծ»-ը, համագործակցելով ՀՀ առողջապահության նախարարության և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հետ, ՀՀ մարզերում և Երևանում իրականացրել է «Լույս հայի աչքերին» ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ մարզերում իրականացվել են բնակչության ակնային լայնատարած զննումներ և ցուցաբերվել է բուժօգնություն: Բացի այդ, վերոհիշյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են գիտահետազոտական և վերլուծական, բժշկական ուսուցման ու վերապատրաստման, ինչպես նաև հանրային իրազեկման աշխատանքներ:

Նույն ծրագրի շրջանակներում Երևանում իրականացվել է «Անհասության ռետինոպատիայի ակնային զննումներ և բուժում» ծրագիրը:

2014 թվականի սեպտեմբերին ՀՀ առողջապահության նախարարության վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի նորակառույց շենքում հանդիսավորությամբ բացվեց «Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնը»: Այն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և «Հայ ակնաբուժական նախագծի «Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոն» ծրագրի հիմնական բաղադրիչն է:

Կենտրոնի նպատակն է հիմնել և զարգացնել ակնաբուժական մասնագիտացված ներուժ՝ օժանդակելու Հայաստանում և տարածաշրջանում մանկական կուրության կանխարգելմանը: Նորակառույց շենքում տեղակայված կենտրոնը երեխաներին սպառնացող կուրության հիվանդությունների ակնային վիրահատություններ իրականացնելու բնագավառի առաջամարտիկ է տարածաշրջանում: Բարձրորակ վերապատրաստում անցած հայ վիրաբույժների և ԱՄՆ բժիշկների շարունակական համագործակցության շնորհիվ բժշկական այս կառույցի աշխատանքը միտված է

կուրության կանխարգելման նպատակով բուժման և ծառայությունների մատուցման գերազանցության ապահովմանը:

Ամերիկայի Միացյալ հայկական հիմնադրամը (UAF) արդեն երկար տարիներ շարունակական աջակցություն է ցուցաբերում Հայաստանի առողջապահական համակարգին՝ անվճար Հայաստան տեղափոխելով բժշկական սարքավորումներ և դեղորայք:

1997 թվականից Հայաստանում գործում է **Հայ-ամերիկյան առողջության կենտրոնը** (ՀԱԱԿ), որտեղ իրականացվում են բազմաթիվ հետազոտություններ, այդ թվում՝ արտագնա հետազոտություններ ՀՀ բազմաթիվ գյուղերում և քաղաքներում, ինչպես նաև Երևան քաղաքում: Կենտրոնի նպատակն է պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, իրականացնել կրծքագեղձի, արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման, ոսկորների խտության ավտորոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր:

Ակտիվ համագործակցություն է ծավալվում նաև **Ֆրանսիայի հայ բժիշկների միության** (UMAF) հետ: UMAF-ի կողմից Լոռու, Տավուշի, ինչպես նաև Վայոց Ձորի մարզերում իրականացվել է «Ակնոցներ Հայաստանի համար» ակնաբուժական ծրագիրը:

Լոռու մարզում գործում է UMAF-ի ֆինանսավորմամբ հայ մասնագետների կողմից սպասարկվող ատամնաբուժական շարժական կլինիկան (Dental Bus):

Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամն (ՋՀՀ) ավելի քան 15 տարի աշխատում է առողջապահության ոլորտում: ՋՀՀ գործունեությունն առողջապահության ոլորտում կենտրոնանում է հիվանդությունների կանխարգելման վրա՝ ուսուցման և ոլորտի մասնագետների հմտությունների զարգացման, հասարակական առողջապահական արշավների, իրազեկման և տեղեկատվական ցանցի ստեղծման միջոցով: ՋՀՀ կողմից իրականացվում են առողջապահական ծրագրեր՝ Երևանում, Սյունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերում, Արցախի Հանրապետությունում: Ինչպես արդեն վերը նշվեց, Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամը հանդիսանում է 2014թ. հունիսի 16-ին ստորագրված «Հայաստանում հղիության նախաձեռնողյան հսկողության ներարգանդային գերձայնային սկրինինգի բարելավման և բնածին արատների վաղ հայտնաբերման ծրագրի մասին» Փոխընթերցման հուշագրի կողմերից մեկը:

«Հայաստանի մանուկների հիմնադրամ» (COAF) բարեգործական

կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով:

2012թ. նոյեմբերից ՀՀ առողջապահության նախարարության և «Հայաստանի մանուկների հիմնադրամի» համագործակցությամբ Արմավիրի և Արագածոտնի մարզերի 10 դպրոցներում ներդրվել է «Առողջ դպրոցներ» նախաձեռնությունը, որի շրջանակներում հիմնադրամի անմիջական աջակցությամբ հաջողությամբ իրականացվում են ծրագրեր, որոնք համահունչ են ՀՀ առողջապահության նախարարության կողմից հավանության արժանացած՝ առողջությանը նպաստող դպրոցների գաղափարախոսությանը: Հաշվի առնելով նշված ասպարեզում արձանագրված հաջողությունները, դիտարկվում է նախաձեռնության մեջ ընդգրկել նաև Լոռու և Շիրակի մարզերի դպրոցները, որտեղ կազմակերպությունը նույնպես իրականացնում է ծրագրեր:

ՀՀ առողջապահության նախարարության անմիջական մասնակցությամբ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական գործունեություն են իրականացրել նաև արտերկրից ժամանած և հիմնականում սփյուռքահայ բժիշկներից կազմված մասնագիտական թիմեր: Այդ առումով հատկապես ակտիվ է եղել համագործակցությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Բելգիայի և Ռուսաստանի Դաշնության հայ համայնքների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ-ից ժամանել էր Ֆրեզնոյում Հայաստանի պատվավոր հյուպատոս Պերճ Աբգարյանի գլխավորած 30 հոգուց բաղկացած բժշկական խումբը, որը Երևանի, Հայաստանի մարզերի ու Արցախի մի քանի բուժհաստատություններում իրականացրեց բժշկական խորհրդատվություններ և ցուցաբերեց բուժօգնություն:

Ակտիվ համագործակցություն է իրականացվել ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի կողմից: Մասնավորապես՝ 2017 թ. հունիսի 16-ին Արյունաբանական կենտրոն այցելեցին ԱՄՆ Կալիֆոռնիայից ժամանած բժիշկ իմունաբան, Oncord ընկերության գործադիր փոխտնօրեն Դեյվիդ Եսայանը և բժիշկ ուռուցքաբան, Oncord ընկերության նախագահ Սյուզան Զերյանը: Այցի շրջանակներում սփյուռքահայ

գործընկերները ներկայացրին իրենց գործունեությունը ուռուցքաբանության և նոր դեղամիջոցներ ուսումնասիրող կլինիկական փորձարկումների ոլորտում:

Օգոստոսին Բելգիայի Լյուվենի համալսարանի կենսաբժշկական ֆակուլտետի ուսանող Արա Սարգսյանն ու Սլովենիայի դեղագործական բաժնի ուսանողուհի Անա Կորենցան անցան պրակտիկա Արյունաբանական կենտրոնում՝ «Ուսանողների փոխանակման ծրագրի» շրջանակներում: Նրանք ծանոթացան կենտրոնում կիրառվող արյան հիվանդությունների ախտորոշման և բուժման ժամանակակից մեթոդներին:

Հոկտեմբերի 23-ին անվանի բժիշկ, Փարիզի Saint Louis հիվանդանոցի կլինիկական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, Diderot համալսարանի կլինիկական դեղաբանության ամբիոնի պրոֆեսոր Ժան Ժակ Քիլաջյանն այցելեց Արյունաբանական կենտրոն: Այցի շրջանակներում նա հանդիպում ունեցավ կենտրոնի բժիշկների, կլինիկական օրդինատորների հետ, քննարկվեցին արյունաբանության ոլորտի ընթացիկ զարգացումները, առկա խնդիրները: Այնուհետև նա տեսակցեց հիվանդներին, ծանոթացավ նրանց բուժման ընթացքին՝ տալով հիվանդների վարման հետ կապված իր մասնագիտական խորհուրդները:

2017 թ. հունիս ամսին սփյուռքահայ բժիշկ ուռուցքաբան Արթուր Սալիբյանը ԱՄՆ Կալիֆորնիա նահանգից հերթական անգամ այցելել է Հայաստան՝ ՀՀ ԱՆ ուռուցքաբանության ազգային կենտրոնում և Կանանց առողջության պահպանման հայ-ամերիկյան կենտրոնում հայ մասնագետների օգնությամբ և մասնակցությամբ իրականացնելով կրծքագեղձի քաղցկեղի հետևանքով մաստէկտոմիա տարած կանանց կրծքի պլաստիկ վերականգնման բացառիկ վիրահատություններ, ինչպես նաև խորհրդատվություններ: Արթուր Սալիբյանի այցի նպատակն է ոչ միայն անվճար վիրահատություններ իրականացնելն ու իմպլանտներ տեղադրելը, այլ նաև հայ մասնագետներին այդ տեսակ վիրահատության նրբությունները սովորեցնելը: Դեռևս 2015թ. ուռուցքաբանի և ՀՀ ԱՆ գլխավոր ուռուցքաբանի միջև ստորագրվել է փոխհամաձայնության մասին փաստաթուղթ, համաձայն որի վերը նշված ծրագիրը շարունակական բնույթ կկրի:

Սփյուռքահայերի և Սփյուռքի հայ համայնքների հետ տարվող աշխատանքները իրականացվում են բազմաթիվ ուղղություններով, մասնավորապես. ՀՀ սփյուռքի

Նախարարի միջնորդությունների հիման վրա 2017 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվել են ուղեգրումներ՝ սիրիահայերի անվճար հիվանդանոցային, այդ թվում՝ վիրաբուժական, թերապևտիկ բուժման, ինտերվենցիոն սրտաբանական միջամտությունների /պետության մասնակցության մասով/ նպատակով, ինչպես նաև մանկաբարձագինեկոլոգիական և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների համար:

ՀՀ առողջապահության նախարարությունը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև 2017 թ. հուլիսի 21-29-ը կայացած Հայ մարմնակրթական ընդհանուր միության 10-րդ համահայկական մարզախաղերի կազմակերպման գործում: